# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ` ՀՀ Արարատի մարզի §Պ. Սևակի միջնակարգ դպրոց¦ ՊՈԱԿ-ի մայրենի ( 12 ժ), արվեստ (3 ժ), իմ հայրենիքը (2 ժ), իմ հայրենիքը և աշխարհը (2 ժ), ֆիզիկա ( 16 ժ), մաթեմատիկա (20 դասաժամ), ռուսաց լեզու ( 7 ժ ), երաժշտություն( 8 ժ) և կերպարվեստ ( 8 ժ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով` թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է` ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել`

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին¦ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները` ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

ö³ëï³ÃÕÃ»ñÝ ÁÝ¹áõÝíáõÙ »Ý ëáõÛÝ Ñ³Ûï³ñ³ñáõÃÛ³Ý Ññ³å³ñ³ÏÙ³Ý ûñí³ÝÇó` սեպտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 23-ը ներառյալ, ամեն օր` ժամը $10^{-00}$-ից $15^{-00}$-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 30-ին` ժամը $14^{00}$-ին, ՀՀ Արարատի մարզի Պ. Սևակի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Պարույր Սևակ, 3-րդ փ., 1-ին շ:

Տեղեկությունների համար զանգահարել` (077) 99-66-95 հեռախոսահամարով: